ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, 091435136, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

23.02.2016թ.
271-ի 1

ՀՀ Տավուշի մարզպետ
պարոն Հովիկ Աբովյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Աբովյան,

«Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ (ուժի մեջ է մտել ս/թ հունվարի 1-ից) տեղեկատվության ազատության ոլորտում նոր պարտավորություններ են սահմանվել տեղեկատվություն տնօրինողների համար:

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք հայտնել, թե Ձեր ղեկավարությամբ գործող գերատեսչությունն ի՞նչ քայլեր է ձեռնարկել վերոնշյալ որոշման կատարման ուղղությամբ: Մասնավորապես՝

1. 2016թ.-ի հունվարի 1-ից քանի՞ տեղեկատվություն ստանալու էլեկտրոնային հարցում է ստացել Ձեր գերատեսչությունը:
2. Դրանցից քանիսի՞ն է պատասխան տրվել բանավոր, գրավոր, քանի՞սն են վերահասցեագրվել, և/կամ քանի՞սն են մերժվել:
3. 2016 թ.-ի հունվարի 1-ից՝ համաձայն վերոնշյալ Կարգի, Ձեր պաշտոնական ինտերնետային կայքը հնարավորություն տալի՞ս է դիմողներին հարցումներ ուղարկել առցանց՝ կայքի համապատասխան բաժնի միջոցով (Կարգի 6-րդ կետ): Խնդրում ենք ուղարկել համապատասխան հղումը:
4. Կարգի համաձայն՝ 2016 թ.-ին ամփոփվե՞լ է արդյոք հաճախակի տրվող հարցերի շրջանակը և պաշտոնական կայքում ստեղծվե՞լ է «Հաճախակի տրվող հարցեր» կամ այլ համապատասխան բաժին: Խնդրում ենք ուղարկել համապատասխան հղումը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

Լիանա Դոյդոյան
Նախագահ